ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 141

ք. Երևան 26.08.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/11» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԷԱԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00498192, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տիգրան Մեծի փ., 63. բն. 23 (այսուհետ՝ նաև Մասնակից)): Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված 1-ի առաջին կետում նշված է, որ «ԷԱԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Սակայն ՀՀ պետական վերահսկողական ծառայության 05/04/2024թ. թիվ Ե/801-24, 06/08/2024թ. թիվ Ե/1828-24 և ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/17361-2024 գրությունների համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 22.07.2024թ. N 03/26-1/15366-2024 գրությունը, որոշում եմ՝ «ԷԱԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ